# ՄՐՑՈՒՅՑ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Գերմանական միջազգային համագործակցության ընկերության (GIZ) «Հարավային Կովկասում իրավական և դատական բարեփոխումների համար խորհրդատվություն» ծրագիրը կազմակերպում է **լրագրողական մրցույթ՝ ընտրական գործընթացների շրջանակներում իրավական հարցերի, ընտրական օրենսդրության լուսաբանմանը նվիրված հրապարակումների վերաբերյալ:** Մրցույթին կարող են մասնակցել զանգվածային լրատվության միջոցներով լրատվական գործունեություն իրականացնող բոլոր լրագրողները:

Մրցույթին մասնակցելու համար ընտրական գործընթացների իրավական ասպեկտների լուսաբանմանը նվիրված համապատասխան հոդվածը (նյութը, տեսանյութը և այլն) պետք է հրատարակված լինի 2012թ. մայիսի 1-ից մինչև մրցույթի ավարտը ընկած ժամանակահատվածում:

Մրցույթում հաղթող ճանաչված անձանց կտրվի դրամական պարգև համապատասխանաբար՝

1-ին տեղի համար՝ 200.000 ՀՀ դրամ
2-րդ տեղի համար՝ 160.000 ՀՀ դրամ
3-րդ տեղի համար՝ 120.000 ՀՀ դրամ:

Մրցույթին մասնակցելու համար լրագրողը պետք է ներկայացնի՝

- համապատասխան տպագիր մամուլի օրինակը, որտեղ հրատարակվել է հոդվածը, կամ տեսանյութը DVD կրիչով՝ նշելով, թե երբ և որ հեռուստաալիքով է այն թողարկվել, կամ այն ինտերնետային կայքի հասցեն, որտեղ հոդվածը հրատարակվել է,
- իր անունը, ազգանունը, կոնտակտային տվյալներ:

Ներկայացված աշխատանքների գնահատման ժամանակ հաշվի կառնվեն մասնավորապես.

- Լուսաբանված տեղեկատվության կարևորությունը,
- աշխատանքի մասնագիտական որակը (տեղեկատվության համակողմանի և ամբողջական լինելը, վերնագրի յուրահատկությունը, տեղեկատվության ներկայացման ոճը, լրագրողական էթիկայի պահպանումը),
- իրավական հստակությունն ու ճշգրտությունը:

Մրցույթին մասնակցելու **համար հայտերը կարող եք ներկայացնել ս.թ. մայիսի 7-ից հունիսի 14-ը՝ ք.** Երևան, Բաղրամյան 4/1 հասցեով՝ Գերմանական միջազգային համագործակցության ընկերության (GIZ) «Հարավային Կովկասում իրավական և դատական բարեփոխումների համար խորհրդատվություն» ծրագրի գրասենյակ, Անի Չիլինգարյանին՝ յուրաքանչյուր աշխատանքային օր՝ ժամը 11:00-18:00 կամ ուղարկել ani.chilingaryan@giz.de էլեկտրոնային հասցեին:

Հարցերի դեպքում կարող եք զանգահարել (010) 540981, 589498 հեռախոսահամարներով: